



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

76

2

L-85

my. 26

2010

ԼՍԱՐԱՆ

ՉՆՏՈՒՄԻՆ ԳԻՏԵԼԵԱՑ

և

ԳՐԱՍՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒՂԵՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՅ

ՆՈՒ ԻՆՏԵՐՆԱ



ԻՍՏԱՆ

Իզմիրի Ինքնուրույն Ուսմանական Զայն

1861.

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՍՏՈՒԱՄԱՇՈՒՆՉ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

ԴԱՍ ԻՆՆԵՐՈՐԳ .



Գիպտոսի երկիրը հին ատենէն իվեր անուանի եղած է իրեն պտղաբերութեանը համար: Ոչ միայն չորս բովի ուրիշ երկիրները, այսինքն Քանանացոց երկիրը, Ասորոց երկիրը, Արաբիան ու Լիբիան անկից կառնէին ու կառնուն գլխաւորապէս իրենց ցորենն ու ամէն տեսակ ուտելիքը, հապա նաեւ Յունաստան ու Կոստանդնուպօլիս. որով ամէն ատեն եգիպտոսը ճանչցուեր է շտեմարան (ամպար) արեւելից: Այս առատութեան ու պտղաբերութեան մէկ մեծ պատճառը եգիպտոսի նեղոս գետն է. անոր համար հին ատենի կռապաշտ եգիպտացիները մինչեւ Աստուծոյ տեղ ղնելով պաշտեր են նեղոսը, հիմակուան ժողովուրդներն ալ թէպէտ կռապաշտ չեն, բայց սրբազան կամ օրհնեալ անունը կուտան անոր. այս է իրենց նիլի միւլպարէք ըսածը: Վասն զի եգիպտոսի երկիրը գրեթէ բոլոր տարին ամենեւին անձրեւ չիգար. արձրեւի տեղը բռնողը նեղոսն է, որ եգիպտոսի հարաւային արեւմտեան կողմն եղած եթովպիայէն՝ այսինքն Հապէշստանէն կուգայ, ու բոլոր եգիպտոսի մէջէն անցնելով՝ Միջերկրական ծովը (ձերմակ ծովը) կթափի: Հապէշստանի մէջ չորս հինգ ամիս միակերպ անձրեւ կուգայ ամառը. այն անձրեւներէն ետքը՝ Օգոստոսի առջի օրերը նեղոսը կսկսի աճիլ, եւ մինչեւ 18 կանգուն կբարձրանայ, բոլոր եգիպտոսի ահագին հովիտը (երլոն կամ տէրէն) կկոխէ, երկիրը կպարարտացնէ, ու քաշուած ատենն ալ բարեբեր ցեխ մը կծրգէ որ ամէն տեսակ բոյս եւ արմրտիք՝ ընդեղէն բուսցնելու շատ յարմար է: Թէ որ նեղոսի աճումը 18 կանգունէն երկու երեք կանգուն պակաս լինի, ե-

գիպտոս սով կիյնայ. իսկ թէ որ աւելի բարձրանայ, նոյնպէս մեծամեծ վնասներ կընէ: Ասոր համար հին ատենի թագաւորները, եւ գլխաւորապէս Յովսէփ նահապետը — ինչպէս որ շատ հաւանական է — ջրանցքներ ու լճեր փորեր են գետին երկու կողմերն որ ջուրը թէ՛ շատ բարձրանայ եւ թէ՛ քիչ՝ երկիրը սովի վտանգ չքաշէ:

Երբոր Յովսէփայ գուշակած սովը քանի գնաց սաստկացաւ, ու եգիպտոսէն դուրս եղած երկիրներն ալ քաղցածութիւնը տիրեց, Յակոբ նահապետը լսելով թէ եգիպտոս ցորեն կծախուի, ստիպեց իրեն որդիքն որ հոն երթան, ցորեն գնեն. բայց Բենիամինը չղըրկեց անոնց հետ, գուցէ ճանապարհի դժուարութիւններուն չդիմանար՝ կհիւանդնայ ըսաւ. ասով կիմացուի որ Բենիամին Յովսէփայ տեղը մնացեր էր հօրը քով՝ օգնական եւ մխիթարանք, ուստի եւ ուրիշներէն աւելի փափկասուն:

Գնացին Յովսէփայ տասը եղբարքը եգիպտոս, եւ ուրիշ ցորեն գնողներուն պէս՝ իրենք ալ Յովսէփայ առջեւն ելան, երկրպագութիւն ըրին: ձանչցաւ Յովսէփ եղբայրներն ու մէկէն միտքը եկան անշուշտ իւր երազները, նոցա ձեռքովը գուրը ձգուածն ու անկից հանուիլն ու ծախուիլը. ո՛ր գիտէ ի՛նչպէս տակնուվրայ եղաւ սիրտը, բայց ինքզինքը բռնեց. այնպէս ձեւացուց որ իբր թէ ոչ միայն ամենեւին չճանչնար զանոնք, հապա նաեւ կասկածելի (իշքիւի) մարդոց տեղ կդնէ. «Ուսկի՞ց կուգաք դուք, ըսաւ:—Քանանացուց երկրէն եկանք որ ցորեն գնեմք» ըսին: Ուզեց Յովսէփ որ իրենց բերնովը պատմեն իրենց ո՛վ եղածը. դարձաւ ըսաւ անոնց թէ «Գուր ինձի լրտես (չաշուտ) կերեւնաք. — տասը հատ կտրի՞՞ քիչ շատ իրարու նման, ու ազնուականութիւննին կերպարանքներուն վրայ յայտնի. — դուք մեր տէրութիւնը լրտեսելու եկեր էք: — Ոչ տէր, ըսին. քու ծառայքը կերակուր գնելու եկեր եմք. ամէնքս ալ մէկ մարդու որդի՛ հանդարտ ու խաղաղ մարդիկ եմք, լրտեսութիւնը ամենեւին մեր բանը չէ»: Երբոր Յովսէփ վրայ տուաւ, ստիպուեցան եղբայրներն ըսելու թէ «Մեք տասուերկու եղբայր եմք, Գանանացուց երկիրը բնակող. ամենէս փոքրը հօրը քովն է, եւ մէջերնէս մէկը կսրսուած է»:

Յովսէփի կասկածի զնաց որ մի՛ գուցէ իւր Բենիամին եղբօրը գլխուն ալ փորձանք մը բերած են ու զինքը խաբելու համար կըսեն թէ հօրը քովն է. ձայնը բարձրացուց, «Փարաւոնի կենացը վրայ երդում կընեմ որ դուք լրտես էք, ըսաւ, թէ որ այդ ձեր խօսքին մէջ սուտ մ'ը կայ. ուստի ես չեմ հաւատար ձեզի՛ մինչեւ որ ձեր այն փոքր եղբայրն ալ հոս չգայ: Ուրեմն դուք հոս բանտը կեցէք, ու ձեզմէ մէկը թող երթայ զինքը բերէ որ տեսնեմ թէ խօսքերնիդ իրա՞ւ է թէ սուտ»:

Երեք օր բանտը կեցընելէն ետեւ, նորէն առջեւը բերել տըլաւ Յովսէփի եղբայրներն ու ըսաւ. «Ես ալ աստուածավախ մարդ եմ. չեմ ուզեր որ անիրաւութիւն լինի ձեզի. ուրեմն թէ որ դուք անվնաս ու անմեղ մարդիկ էք, այսպէս ըրէք. թող ձեզմէ մէկը միայն մնայ բանտին մէջ, իսկ դուք ձեր առած ցորենը տարէք ու եղբայրնիդ առէք ինծի բերէք որ իմանամ թէ ճշմարիտ է ձեր խօսքը. ապա թէ ոչ՛ գիտնաք որ ձեր պատիժը մահ է:—Այդպէս լինի տէր» ըսին ու սկսան իրարու ըսել հրեարէն թէ «Արժանի եմք մեք այս փորձանքին, վասն զի մեզք ըրինք մեր եղբօրն ու մտիկ չըրինք աղաչանքին. այս անոր պատիժն է ահա որ կըաշեմք»: Ռուբէնն ալ վրայ բերաւ թէ «Մտքերդ չէ՞ իմ խօսքս որ ըսի ձեզի թէ տղուն արիւնը մի՛ մտնէք. մտիկ չըրիք. ահա հիմա նորա արիւնը մեզմէ կուզէ Աստուած»:

Ձէին գիտեր որ Յովսէփի իրենց ամէն ըսածն ալ կհասկընար, ու չհասկընալ ձեւացընելով՝ Թարգմանով (Թերճիմանով) կխօսէր հետերը: Յովսէփի չդիմացաւ՝ երբոր լսեց իւր եղբարցը անողոքելի խղճմտանքին արդար աղաղակը, եւ տեսաւ անոնց քաշած տագնապն ու նեղութիւնը՝ անոնց իրեն ըրած չարութիւններուն համար. հեռացաւ մէկ ուրիշ սենեակ մը ու լացաւ մարդկային խեղճութեան ու եղբարցը չարչարանքին վրայ: Յետոյ նորէն եկաւ, մէջերէն Շմաւոնն ընտրեց — որ գուցէ միւսներուն գրգռիչն եղեր էր ատենով, կամ թէ նա էր որ զինքը կապեր՝ գուրը ձգեր էր, կամ թէ անոր համար որ մեծերէն մէկն էր — կապել տուաւ զինքն ու բանտ դրկեց, իսկ մէկալները ճամբեց: Հրամայեց իւր մարդիկներուն որ անոնց քուրձերը

(չուվալները) ցորենով լեցրնեն, ամէն մէկուն բերած ստակը իւր քրծին բերանը դնեն, ճամբու ալ պաշար:

Ճանապարհին վրայ իջեւան մը որ հասան, մէջերէն մէկը իւր քուրծին բերանը բացաւ որ իշուն գարի տայ. տեսնէ որ բերած ստակն ալ քրծին մէջն է: Եղբարցը պատմեց, ամէնքն ալ զարմացան, շիոթեցան, «Հոս Աստուծոյ բանը կայ» ըսին, բայց իրենց քուրծերն ալ բանալ նայիլը մտքերնէն չանցաւ:

Քանանացոց երկիրն որ հասան, տեղնիտեղը պատմեցին Յակոբայ իրենց գլխէն անցածները. յետոյ երբոր քուրծերը պարպելու եղան, տեսնեն որ ամենուն ստակն ալ ամբողջ ետ դարձուեր է: շիոթեցան, տակնուվրայ եղան. հայրերնին ալ վախցաւ, նեղացաւ, ըսաւ իրենց թէ «Զիս անզաւակ ըրիք թողուցիք. Յովսէփը չկայ, Շմաւոնը չկայ. հիմա Բենիամիօնն ալ պիտի առնուք: Այս ամէն փորձանքները իմ գլխուս պահուած են եղեր. — Յիմ վերայ եկն այս ամենայն»: Յակոբայ այս ետքի խօսքը ո՛րչափ ալ չվայելու պէս երեւնայ այնպիսի արդարոյ մը բերանը, նախ այս մտածելու է որ արդար մարդն ալ ամենայն իրաւունք եւ ազատութիւն ունի իւր սրտին կսկիծն ու ցաւը ուզած ատենը յայտնելու, բաւական է որ Աստուծոյ ամենասուրբ կամացն ու նախախնամութեանը դէմ չգանգատի յուսահատութեամբ: Երկրորդ, շատ հաւանական է որ Յակոբ վստահութիւն չունէր որդւոցը խօսքին վրայ, մանաւանդ թէ կրկասկածէր ալ որ Յովսէփայ գլխուն բան մը բերողը նոցանախանձն էր, ուստի եւ Բենիամիսին կրնային վնաս մը ընել:

Ռուբէն շատ աշխատեցաւ որ խօսք հասկըցընէ հօրը. «Թէ որ Բենիամինը ողջ առողջ քեզի չըարձընեմ, իմ երկու որդիքս մեռցուր» ըսաւ. բայց ճար չեղաւ: «Իմ որդիս ձեզի հետ պիտի չերթայ, ըսաւ Յակոբ. սորա եղբայրը մեռաւ, սա մինակ մնացեր է. թէ որ ճամբան հիւանդանայ, բան մը լինի, լալով ողբալով գերեզման պիտի իջնամ»: Բայց երբոր սովը քանի գնաց սաստկացաւ, իրենց բերած ցորենն ալ հատաւ լմնցաւ, Յակոբ ուզեց որ որդիքը նորէն երթան Եգիպտոս: Յուդան պատասխան տուաւ թէ «Այն մարդը ամենայն խստութեամբ ապսպրեց ձեզի որ եթէ մեր պզտիկ եղբայրը հետերս չտանիմք՝

ամենեւին աչքին չերեւնամք. ուստի թէ որ Բենիամինը կուտաս՝ կերթամք. ապա թէ ոչ, պէտք է որ առանց հացի մնամք ու ամենքս քաղցածուծուծ մեռնիմք: — Այս ի՞նչ ձիւն է որ բերիք գլխուս, ըսաւ Յակոբ. ի՞նչ հարկ կար իրեն ըսելու որ մէկ ուրիշ եղբայր մ'ալ ունիք: — Ի՞նչ ընէինք, ըսին որդիքը. բան չթողուց որ չհարցընէ. որո՞ւ որդիքն էք. հայրերնիդ ո՞ղջ է, ուրիշ եղբայր ալ ունի՞ք. որո՞ւ մտքէն կանցնէր որ պիտի ելլէ ըսէ մեզի թէ գնացէք ձեր եղբայրը հոս բերէք»: *Եղբայր*

Երբոր Յուզան ուրիշներէն ալ աւելի աղաչեց պաղատեցաւ ու ինքը երաշխաւոր (քէֆիլ) եղաւ, վերջապէս հաւանեցաւ Յակոբ. «Այնպէս է նէ, ըսաւ, եկէք այսպէս՝ ըրէք. հետերդ ընծաներ տարէք մարդուն՝ մեր երկրիս բերքերէն, այսինքն ռետին (որ է անուշահամ ու անուշահոտ իւղ), մեղր, խունկ, բեւեկն (Թիրէմէնթինի պտուղ) եւ ընկուզ. ստըկին ալ կրկինը առէք հետերդ. սխալ բան մը եղած կրնայ լինել. պոէք այդ եղբայրնիդ ալ՝ գնացէք մարդուն. Աստուած տայ որ մարդը անուշ աչքով նայի ձեր վրայ ու նմաւոնն ալ՝ Բենիամինն ալ ինծի դարձնէ. իսկ ես զաւակս կորուսի՛ ու կորուսի: — Բայց ես՝ որպէս անզաւակեցայ անզաւակեցայ»: *Եղբայր*

Գնացին Յովսեփայ եղբարքն ու Բենիամինին հետ մէկտեղ առջեւ ելան: Յովսեփ զանոնք ու Բենիամինն որ տեսաւ, հրամայեց իւր տանը վերակացուին որ տունը տանի մարդիկն ու մեծ կերակուր մը պատրաստէ. «Կէսօրուան ճաշը մէկտեղ տիտի ուտեմք» ըսաւ: Եղբարքը Յովսեփայ հրամանը չգիտնալով կամ չհասկընալով, կարծեցին թէ զիրենք նորէն բանտ պիտի դնէ, կամ գերիի պէս պիտի պահէ՝ ստըկին բանին համար: Շուտ մը, հազարապետին աղաչանք պաղատանք ընելով հասկըցուցին իրենք իրենցմէ՛ դեռ ներս չմտած, որ այն ստակն ալ ետ բերեր են, անոր կրկինն ալ. «Ձեմք գիտեր ո՞վ դրեր էր այն ստակը մեր քուրճերուն մէջ» ըսին: «Սրտերնիդ հանգիստ թող լինի, ըսաւ հազարապետը. այն ստակը ձեր քուրճերուն մէջ դնողը՝ ձեր ու ձեր հարցը Աստուածն է. ես ձեր ստակը վաղուց առեր եմ»: Յետոյ նմաւոնն ալ հանեց բերաւ անոնց քով, ու ամենքը մէկէն ներս տարաւ, ջուր բերին՝ ռոքերը լուացին:

երբոր կէսօր եղաւ, Յովսէփ ալ տուն եկաւ. հանեցին եղբայրները՝ իրենց հետ բերած ընծաներն անոր մատուցին ու ընկան երկրպագութիւն ըրին: Հարցուց Յովսէփ թէ «ի՞նչպէս էք. ի՞նչպէս է, առո՞ղջ է ձեր ծերունի հայրն որ կենդանի է ըսիք:— Ողջ ու առողջ է քու ծառադ՝ մեր հայրը» ըսին: «Աստուծոյ օրհնած մարդն է այն մարդը» ըսաւ Յովսէփ: Մէկէն ընկան երեսի վրայ, նորէն երկրպագութիւն ըրին:

Յովսէփ վեր նայեցաւ, տեսաւ Բենիամինը. «Այս է ձեր փոքր եղբայրն որ ինծի պիտի բերէիք. Աստուծոյ ողորմութիւնը վրադ լինի, որդեակ» ըսաւ ու սիրտը լցուեցաւ, չկրցաւ հոն կենալ. ներս քաշուեցաւ՝ կուշտ մը լացաւ. յետոյ երեսը լուաց, սիրտը ամուր բռնեց, ելաւ դուրս ու հրամայեց որ կերակուրը տան: Բերին կերակուրներն ու իրեն զատ տուին, եղբարցը զատ, ուրիշ եգիպացիներուն ալ զատ. վասն զի եգիպտացիք ուրիշ ազգի հետ կերակուր չէին ուտեր, պիղծ կիսամարէին զանոնք:

Կերակրէն ետեւ հրամայեց Յովսէփ իւր հազարապետին որ այն մարդկանց քո՛րձերը ցորենով լեցընեն, ամէն մէկուն բերած ստակը նորէն քուրձերուն բերանը կապեն, իւր արծընթէ գաւաթն ալ պզտիկին քուրձին մէջ դնեն՝ ստրկին հետ մէկտեղ:

Երկրորդ առաւօտը ճամբայ ելան մարդիկը ուրախութեամբ: Բայց հազիւ թէ քաղաքէն դուրս ելեր էին, ետեւներէն հասաւ հազարապետը Յովսէփայ հրամանովն ու սկսաւ սաստկութեամբ խօսիլ հետերնին. «Այս ի՞նչ ապերախութիւն է ձեր ըրածն, ըսաւ. ի՞նչ ըսիք ու իմ տիրոջս գաւաթը գողցաք. չէ՞ք գիտեր որ նա անով միայն կխրմէր իրեն ըմպելիքը եւ անով գուշակութիւններ կընէր: Շատ գէշ բան էր որ ըրիք»: Սարսափեցան մարդիկը. դարձան ըսին իրեն թէ «Այդ ի՞նչ խօսքեր են որ կլըսեմք, տէր. քա՛ւ լիցի որ քու ծառաներդ այդպիսի բան ընեն. մեք որ մեր քուրձերուն մէջ գտնուած ստակը Քանանացուց երկրէն առինք ետ բերինք, ի՞նչպէս կրնայինք քու տիրոջդ տնէն արծաթ կամ ոսկի գողնալ: Թող մեր մէջէն որո՛ւ քովն որ գտնուի այն գաւաթը, նա մահապարտ լինի, մեք ալ մեր տիրոջը գերի լինիմք.— ոչ, ըսաւ հազարապետը. գաւաթը որո՛ւ քովէն որ ելլէ, նա ինծի գերի թող մնայ. միւսները յան-

ցանք չունին» : Շուտ մը ամէն մարդ իրեն բեռը իջեցուց՝ գետին դրաւ ու բացաւ . հազարապետն ալ մեծէն մինչեւ փոքրին քուրծն որ նայեցաւ՝ բենիամինին քուրծին մէջ գտաւ գաւաթը : Ամէնքն ալ իսկոյն իրենց վրայի հագուստը պատռտեցին՝ սըրտերուն ցաւին նշան . բեռները դրին նորէն էշերուն վրայ ու քաղաք դարձան : Յուդա եղբայրներովը ելաւ Յովսէփայ առջեւն ու երեսի վրայ ընկան երկրպագութիւն ըրին : « Ի՞նչ է այդ ձեր ըրածը , ըսաւ Յովսէփ . միթէ չէ՞ք գիտեր որ ինծի պէս մարդը ամէն բան կգուշակէ կիմանայ : — Ի՞նչ պատասխան կրնամք տալ , տէր . ի՞նչ՞ ըսեմք , ի՞նչ իրաւունք ցուցնեմք , ըսաւ Յուդա . Աստուած մեր յանցանքը մեր երեսին զարկաւ . ահա ամէնքս ալ քու գերիներդ եմք՝ թէ մեք եւ թէ նա որոյ քուրծէն գաւաթը ելաւ : — Ոչ , ըսաւ Յովսէփ , քաւ լիցի որ ես այդպիսի բան ընեմ . հապա որո՛ւ քովէն որ ելաւ գաւաթս՝ նա իմ գերիս լինի , իսկ դուք բարով գնացէք ձեր հօրը » : Յուդան առաջ անցաւ ու ըսաւ . « Կաղաչեմ տէր , հրաման տուր ինծի որ մէկ խօսք մը ըսեմ առջեւդ : Երբոր մեք գնացինք պատմեցինք մեր ծերունի հօրը քու ապարածդ , անկարելի ելաւ խօսք հասկըցնել իրեն որ թող տայ այս մեր փոքր եղբօրը հոս գալ . դուք ալ գիտէք որ , ըսաւ մեզի , Ռաքէլ ինծի երկու գաւակ միայն թողուցեր էր . մէկը քովէս հեռացաւ , ըսիք թէ գազանները կերան . մինչեւ հիմայ տեսոյն կարօտ մնացի . այժմ սա ալ կուզէք առնուլ տանիլ . Ձամբան որ հիւանդանայ՝ ես ի՞նչ պիտի ընեմ . ծերուածանս ատեն տրտում տխուր գերեզման պիտի մտնեմ : Թէ որ հիմա երթամք ու այս տղան մեր հետը չլինի , ա՛յն է որ իսկոյն պիտի մեռնի ծերունին : Բայց որովհետեւ ծառադ երաշխաւոր եղեր է այդ տղուն համար , ե՛ս գերի մնամ , տէր , քու քովդ՝ դորա տեղը , ու դա թող իւր եղբարցը հետ հօրը քով դառնայ . իսկ ես ամենեւին չեմ կրնար առանց դորա հօրս երթալ ու անոր չարչարանքն ու մահը տեսնել » :

Ձկրցաւ Յովսէփ այնուհետեւ դիմանալ . հրամայեց որ եղբայրներէն իզատ ամէնքն ալ դուրս ելլեն , ու մինակ մնացածներուն պէս՝ բարձր ձայնով ու լալով դարձաւ ըսաւ եղբայրներուն . « Ես Յովսէփն եմ . յիրաւի մինչեւ հիմա ո՞ղջ է հայրս » :

Խեղճ եղբայրներուն բերանները կապուեցան. բան մը չկրցան ըսել: «Մօ'տ եկէք, ըսաւ. ես ձեր այն Յովսէփ եղբայրն եմ որ դուք առիք ծախեցիք. բայց մի' տրամիք, զիս ծախածներուդ համար, վասն զի Աստուած էր զիս հոս ղրկողը', եւ այն անո'ր համար որ Թէ' ձեզի եւ Թէ ուրիշներուն փրկութեան պատճառ լինիմ. վասն զի դեռ այս սովին երկրորդ տարին է. հինգ տարի ալ կայ որ ամենեւին ցորեն պիտի չլինի, եւ Աստուած կամեցաւ որ իմ ձեռքովս դուք այս սովէն նեղութիւն չքաշէք: Շուտ ըրէք գնացէք ուրեմն ու ըսէք հօրս Թէ «Որդիդ Յովսէփը կըսէ որ Աստուած զիս բոլոր եգիպտոսի տէր ըրաւ. եւ շուտով հոս քովս բնակէ բոլոր ազգատոհմովդ եկուր, ու ամենայն ստացուածքովդ: Ահա դուք ձեր աչքովը կտեսնէք զիս ու իմ փառքս. գնացէք պատմեցէք հօրս ու առէք հոս բերէք զինքը»:

Յետոյ իւր բենիամին եղբօրը վիզը փաթթուեցաւ ու լացաւ, միւս եղբայրներն ալ համբուրեց լալով. եւ անկից ետքը սիրտ ըրին եղբարքը հետը խօսելու:

Երբոր այս բաները Փարաւոն իմացաւ, շատ ուրախացաւ՝ բոլոր իրեն իշխաններովը. ըսաւ Յովսէփայ որ սայլեր, ջորիներ, ստակ, հագուստ, ճամբու պաշար, ամէն բան ղրկէ՝ իւր հայրն ու ազգականները եգիպտոս բերել տայ, եւ եգիպտոսի ամենէն բարեբեր մէկ կողմը հանգիստ բնակեցնէ զանոնք:

Յովսէփայ եղբարքը անպատմելի ուրախութեամբ ճամբայ ելան, գնացին Քանանացոց երկիրը, պատմեցին Յակոբայ իրենց տեսածն ու լսածները: Յակոբ սրտին ուրախութենէն չէր ուզեր հաւատալ. բայց երբոր Յովսէփայ ղրկած սայլերն ու միւս բաները տեսաւ, նորէն երիտասարդանալու պէս կենդանացաւ ծերունին. «Արծարծեցաւ ոգին Յակոբայ» կըսէ սուրբ գիրքը. «Եթէ յիբաւի Յովսէփ որդիս դեռ կենդանի է ըսաւ, ասկէ մեծ ուրախութիւն չկրնար լինել ինծի համար. երթամ, քանի որ չեմ մեռած՝ տեսնեմ զինքը»:

Ճամբայ ելաւ բոլոր ընտանեօքն ու ստացուածքովը: Երբոր Ջրհոր Երզման ըսուած տեղը հասաւ, որ Իսահակայ տեղն էր, Աստուծոյ զոհ մատոյց՝ հօրը յիշատակովը. Աստուած ալ տեսիլքով յայտնուեցաւ Յակոբայ ու ըսաւ. «Մի' վախնար, գնա ե-

գիպտոս. Ես հոն քու ազգատոհմդ պիտի շատցնեմ՝ մեծ ազգ
ընեմ. միշտ քու հետդ պիտի լինիմ, մինչեւ որ Յովսէփ իւր
ձեռքովը պիտի փակէ քու աչքերդ»։ Յակոբ այն տեսիլքէն սիրտ
առած՝ Յամբան առաջ տարաւ, ու 73 հոգևով հասաւ Եգիպտոս։
Քաղաքին որ մօտեցաւ, առջեւէն Յուդան ղրկեց որ Յովսէ-
փայ իմացընէ իւր գալը. Յովսէփ ալ իսկոյն կառքը պատրաս-
տել տուաւ, հօրը առջեւն ելաւ, ու քովը հասածին պէս՝ վիզը
փաթթուեցաւ ու բարձր ձայնով լացաւ. հայրն ալ ըսաւ արտա-
սուօք. «Այսուհետեւ սիրով կմեռնիմ, վասն զի տեսայ որ դուն
կենդանի ես»։

Գնաց պատմեց Յովսէփ Փարաւոնին իւր հօրն ու եղբւրքը գա-
լը. եղբարքը մէջէն ալ հինգ հոգի առաւ, Թագաւորին առջեւը
հանեց։ Հարցուց անոնց Փարաւոն Թէ «Ձեր գործն ի՞նչ է»։
Նոքա ալ ինչպէս որ Յովսէփ ապսպրեր էր այնպէս պատաս-
խան տուին Թէ «Մեք ալ մեր հարց ու նախնեացը պէս ոչխար-
ներու հովիւ եմք. ուստի կխնդրեմք որ հրաման տաս ծառա-
ներուդ որ Գեսեմ երկիրը բնակիմք»։ Այս անոր համար ըսին
որ Եգիպտացիք անասնապաշտ լինելով՝ այժմու Հնդկաստան-
ցուց պէս, պիղծ կհամարէին անասուններ կենդանիներ դար-
մանողները, եւ Գեսեմը անասուն պահելու համար՝ բարեբեր
երկիր էր։ Փարաւոն սիրով կատարեց նոցա խնդիրքը։

Յետոյ Յովսէփ իւր հայրն ալ հանեց Փարաւոնին առջեւը։ Մե-
րունին Յակոբ օրհնենքներ տուաւ Փարաւոնին։ Փարաւոն տարիքը
հարցուց. «Հարիւր երեսուն տարեկան եմ, ըսաւ Յակոբ. բայց շատ
նեղութիւն ու չարչարանք քաշած եմ մինչեւ այս տարիքս հասնիլս.
ապա Թէ ոչ, իմ հայրերս ինձմէ շատ աւելի ապրեր են»։

Ահա այս կերպով հանգչեցուց Յովսէփ այն նեղութեան ատեն
իւր հայրն ու եղբայրները եւ ամէն ազգականները. սովին մը-
նացած հինգ տարւոյն մէջ ալ այնպէս իմաստութեամբ ըրաւ
իւր կառավարութիւնը որ ոչ Եգիպտոսի բնակիչները քաղցած
մնացին եւ ոչ տէրութեան գանձը վնաս ունեցաւ։ Եւ զարմանք
չէ, վասն զի Աստուած նորա հետ էր, ինչպէս որ տեսանք։

Տասնըօթը տարի ապրեցաւ Յակոբ նահապետը Եգիպտոսի
մէջ։ Երբոր տեսաւ որ վերջը մօտեցեր է, կանչեց Յովսէփը, եր-

դու՛մ առաւ անկէց որ զինքը եգիպտոս չթաղէ, այլ իրեն հարց գերեզմանը :

Յովսէփի իւր երկու որդիքն ալ տարաւ ետքերն որ օրհնեալ նահապետին օրհնութիւնը առնուն : Իմաց տուին Յակոբայ թէ Յովսէփ որդիդ եկեր է. իսկոյն զօրացաւ ու մահճին վրայ նստաւ, օրհնեց զինքն ու ըսաւ թէ « Բու եփրեմ ու Մանասէ որդիքդ ալ կուգեմ որ իմ որդւոցս կարգը համարուին, եւ նոցա հետ հաւասար բաժին ընդունին այն երկրէն որ ինձի եւ իմ զաւակացս խոստացեր է Աստուած » : Յակոբայ աչքերը ծանրացեր էին ծերութենէն ու բան չէին տեսներ : Երբոր Յովսէփի իւր երկու որդիքն առջեւը բերաւ, « Ատոնք ո՞վ են » ըսաւ Յակոբ : — Աստուծոյ ինձի տուած զաւակներս են » ըսաւ Յովսէփ ու առաջ քշեց որ օրհնենքը առնուն : Համբուրեց զանոնք ծերունին ու գրկեց, « Փառք Աստուծոյ որ ոչ միայն քու երեսէդ կարօտ չձգեց զիս, ըսաւ, հապա արժանի ըրաւ որ քու զաւակդ ալ տեսնեմ » :

Յակոբ այն երկու տղաքը օրհնելու ատենը՝ աջ ձեռքը եփրեմին վրայ դրաւ, թէպէտ եւ նա փոքրն էր, ու ձախ ձեռքին կողմը կեցած. իսկ ձախ ձեռքը Մանասէին գլուխը դրաւ, որ անդրանիկն էր ու աջ կողմը կեցեր էր. եւ այնպէս տուաւ անոնց օրհնենքները : Յովսէփ կարծելով թէ ծերունին սխալեցաւ, ուզեց հօրը աջ ձեռքը վերցնել եփրեմի գլխէն ու Մանասէին գլուխը դնել. բայց Յակոբ պատասխան տուաւ թէ « Գիտեմ որդեակ, գիտեմ որ անդրանիկը Մանասէն է. բայց այս ալ գիտեմ որ փոքրը աւելի մեծ ազգի գլուխ պիտի լինի » : Յետոյ նորէն օրհնեց երկուքն ալ ու ըսաւ թէ « Սոքա այնպէս աճին մեծնան փառաւորուին որ ատենով առակաւոր օրհնենք մը դառնայ Իսրայէլացւոց մէջ ըսելը թէ « Աստուած զքեզ եփրեմին ու Մանասէին պէս ընէ » » :

Կանչեց Յակոբ իւր միւս որդիքն ալ ու ամէն մէկուն զառ զատ խրատներ ու օրհնենքներ տուաւ՝ մարգարէանալով անոնց սերունդներուն գլխէն անցնելիքները : Այն օրհնութիւններուն մէջ ամենէն նշանաւորն է Յուդային տուածը, այս խօսքերուն համար. « Մի՛ պակասեսցէ իշխան Յուդայ, եւ մի՛ պետ յերանաց

նորա, մինչեւ եկեսցէ նա՝ որոյ իւրն է հանդերձեալքն, եւ նա է ակնկալութիւն հեծանոսաց.— այսինքն, Յուդայի ցեղէն Թագաւոր եւ իշխան չպակսի մինչեւ որ գայ նա՝ որ հանդերձեալ կենաց տէրն է, եւ հեծանոսները՝ այսինքն Իսրայէլացւոցմէ դուրս եղած ազգերը՝ նորա վրայ պէտք է դնեն իրենց յոյսը»։ Այս մարգարէութիւնը յայտնի կցուցընէ Թէ Քրիստոս Տէրն մեր Յուդայի ցեղէն պիտի գար աշխարհք ա՛յն ատեն՝ երբոր Յուդայի ցեղէն Հրէաստանի տիրող ոչ Թագաւոր մնար եւ ոչ իշխան. ինչպէս որ իրօք ալ կատարուեցաւ. վասն զի Հերովդէս Թագաւորը ոչ Հրեայ էր եւ ոչ Յուդայի ցեղէն, հապա հեծանոս գալիլեացի։ Մեսիային՝ այսինքն Քրիստոսի արդէն աշխարհք եկած լինելուն ամենէն մեծ ապացոյցներէն մէկն այս է Հրէից դէմ։ Իրենք այս գիտնալով՝ Երուսաղեմի տաճարին կործանելէն ու իրենց աշխարհիս ամէն կողմը ցրուելովը՝ Իսրայէլացւոց 12 ցեղին խառնուիլն ու շփոթիլը տեսնելով, իրենք զիրենք ընդհանուր անունով Յուդայեան անուանեցին, որ է տաճկերէն եւ հիւստի ըսուածը, որպէս զի Մեսիան ուսկից ալ ծնանի — ինչպէս որ իրենք կսպասեն — Յուդայի ցեղէն ծնած համարուի։

Յովսեփին տուած օրհնութեան խօսքերն ալ նշանաւոր են. «Որդեակ անցեալ Յովսէփ, նախանձելի կերպով շնորհօք զարդարուած որդեակ. ծաղկահասակ որդեակ իմ, ինծի դարձիր. ցած չարախօսներն էին քեզ բամբասողները, դատապարտողները. չարամիտ աղեղնաւորներ էին քեզի դէմ Թշնամութիւն ընողները։ Նոցա աղեղները կտոր կտոր եղան, նոցա Թեւերուն ջղերը Թուլցան՝ Յակոբայ պաշտպանութիւն ընող հզօրին ձեռքովը, քու հօրդ Յակոբայ Աստուծոյն ձեռքովը, որ գքեզ օրհնեց բոլոր երկնքին օրհնութեամբը, բոլոր երկրիս վրայ իջնալու օրհնութեամբը։ Յաւիտենական լերանց օրհնութիւնը՝ լեռներէն իջած հեղեղներու պէս իջնայ Յովսեփիս գլխուն վրայ, նորա առաջնորդած եղբարցը գլխուն վրայ»։

Յակոբ նահապետ այս օրհնութիւնները վերջացընելէն ետեւ ոտքերը մահիճը քաշեց ու վախճանեցաւ։ Յովսէփ ընկաւ երեսին վրայ, համբուրեց ու լացաւ. յետոյ հրամայեց եգիպտոսի վարպետ դիագարդներուն, այսինքն մեռելոց մարմինները զմըռ-


սողներուն, որ իւր հօրը մարմինն ալ զմուսեն, ու առաջ 40 օր՝ ետքն ալ 70 օր բոլոր երկիրը սուգ մտան: Յետոյ Յովսէփ Փարաւունի հրամանաւր առաւ հօրը մարմինն ու շատ մեծ ու փառաւոր հանդիսով, բոլոր եգիպտոսի մեծամեծներով, եւ անհամար բազմութեամբ, կառքերով ու ձիաւորներով տարաւ Քանանացոց երկիրը, հոն ալ եօթն օր սուգ կատարել տուաւ, ու Աբրահամու գնած այրին (մաղարային) մէջ թաղեց, եւ դարձաւ նորէն եգիպտոս:

Յովսէփայ եղբայրները ամէն կողմանէ հանգիստ էին այնուհետեւ, բայց իրենց խղճմտանքը դեռ հանգիստ չէր. քանի որ կմտածէին իրենց ատենով Յովսէփայ գլխուն բերածը, վախ մը կուգար վրանին որ մի՛ գուցէ Յովսէփ կերպով մը վրէժը առնու իրենցմէ. այս վախը աւելի ալ սաստկացաւ իրենց հօրը վախճանելէն ետեւ: Ուստի սիրտ ըրին գնացին Յովսէփայ ու ըսին.

«Քու հայրդ մեզմէ երդում առնելով ապսպրեց որ թողուծիւն խնդրեմք քեզմէ. ուրեմն ներէ մեզի մեր յանցանքը. մեք ալ քու հօրդ Աստուծոյն ծառաներն եմք»: Լացաւ Յովսէփ այն սրտաշարժ մեղային վրայ, ու երբոր ոտքը թափեցան՝ երկրպագութիւն ընելով, «Մի՛ վախնաք մի՛, ըսաւ. ես ալ Աստուծոյ ծառան եմ. դուք ինծի չարիք ընել ուզեցիք, բայց Աստուած ինծի բարիք կամեցաւ որ ուրիշ այսքան ժողովրդոց ալ բարութիւն ընեմ. մի՛ վախնաք, հանգիստ եղիք. ես դարձեալ կհոգամ թէ՛ զձեզ եւ թէ՛ ձեր ընտանիքը»: Ասով եղբարցը սիրտը հանգչեցաւ:

Իսկ ինքը Յովսէփ նահապետը մինչեւ 110 տարի ապրեցաւ, ու թողերուն թողերն ալ տեսաւ, ինչպէս որ կվայելէ ծնողասէր որդւոց: Եւ երբ վախճանը մօտեցաւ՝ ապսպրեց եղբարցն որ իւր մարմինն ալ հետերնին առնուն տանին եգիպտոսէն Քանանացոց երկիրը՝ զոր խոստացեր էր Աստուած Աբրահամու, Իսահակայ եւ Յակոբայ. որոց ամենեցուն յիշատակն օրհնութեամբ եղիցի:

Յովսէփայ պատմութենէն առնուելու խրատները խիստ շատ են, բայց է՛ք գոհ լինիմք այն մէկքանի խօսքովն որ իսկզբան ըսինք, ու ձեր բարեպաշտութեանը թողումը մնացածը:



76

0023390

2013

